

ԱՅՐԱՊԱՏԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Փետրուարի 7-ին Վեհափառ Կաթողիկոսից հաստատու-
թիւն ստացաւ «Ատրպատականի հայոց թեմի հիմնական
կանոնադրութիւնը», որ և Ատրպատականի ժողովրդին ուղ-
ղուած յատուկ կանոնական կոնդակով յանձնուեց ի գործա-
դրութիւն: *)

*) Ատրպատականի ներկայ հիմնական կանոնադրութեան հիմքը, սկզբնա-
կան նախագիծը, Թաւրիզում գումարուած մի յատուկ մասնագործի կազմած
«Ատրպատականի թեմական կանոնադրութիւն» եղաւ (բաղկացած 102 յօդուա-
ծից), որ 1902 թիւ աշնանը Ատրպատականի թեմական առաջնորդը պաշտօնա-
կան գրութեամբ ներկայացրել էր Վեհափառ Կաթողիկոսին: Վեհափառը դիտակ
անձերից Թիֆլիսում մի «խմբագրող մասնագործ» է կազմել տալիս և յանձնա-
րարում քննել Թաւրիզի մասնագործի յօրինած նախագիծը: Թիֆլիսի «խմբա-
գրող մասնագործ»-ը, որ գործում էր Ատրպատականի թեմական առաջնորդ եղի-
չէ վարդապետ Մուրադեանի նախագահութեամբ, ղեկտեմբերի սկզբին ներ-
կայացնում է Վեհափառ Կաթողիկոսին իւր «ուղղուած» «Ատրպատականի հայոց
թեմական կանոնադրութիւնը (բաղկացած 81 յօդուածից, տես «Մշակ» № 14,
«Մուրճ» № 1): Նոյն ղեկտեմբերի կիսին էջմիածնում նորին Վեհափառութիւնը
բարեհաճեց Թիֆլիսի նախագիծը յանձնել ինձ՝ քննելու և իրաւաբանօրէն խմբ-
ագրելու համար: Դեռ չէի ներկայացրել կանոնադրութեան իմ նոր խմբագրու-
թիւնը, երբ, ղեկտեմբերի վերջերին, նորին Վեհափառութիւնը հաստատեց Ա-
տրպատականի կանոնադրութեան Թիֆլիսի նախագիծը, «գտանելով դայն բա-
ւարար, սակայն ոչ իբրեւ վերջնական գործ»: Բայց կանոնադրութիւնը հաստա-
տուեց միայն «ժամանակաւորապէս, իբրեւ փորձ» գործադրուելու համար երկու
տարի ժամանակով: Այդ երկու տարուայ ընթացքում ժամանակաւոր կանոնադրու-
թիւնը պիտի ուղղուէր, սրբագրուէր, և ապա միայն «վերջնականապէս հաս-
տատուէր»: 1903 թիւ յունուարին, Թիֆլիսի նախագիծը ուսումնասիրած և մի
նոր խմբագրութիւն մշակած լինելով՝ ներկայացայ Վեհափառ Կաթողիկոսին և
Ատրպատականի թեմական Առաջնորդի հետ միասին խնդրեցինք նորին Վեհա-
փառութիւնից՝ կազմել տալ էջմիածնում մի յատուկ յանձնագործով, որին և
հանձնել Ատրպատականի կանոնադրութեան բոլոր եղած նիւթերը վերջնակա-

ի նկատի ունենալով այդ կանոնադրութեան հասարակական կարևոր նշանակութիւնը, ծանօթացնենք նրա բովանդակութեան հետ, յիշատակելով մասամբ այն փոփոխութիւնները, որ եղել են վերջնական խմբագրութեան ժամանակ:

Սկսենք կանոնադրութեան վերնագրից: Թիֆլիսի մասնաժողովը իր կազմած նախագիծը անուանել էր «Ատրպատականի հայոց թեմական կանոնադրութիւն»: Սակայն աւելի ուղիղ կը լինէր անուանել նախ՝ «թեմի» և ոչ թէ «թեմական» և երկրորդ՝ «հիմնական կանոնադրութիւն» և ոչ թէ պարզապէս «կանոնադրութիւն»:

«Թեմական» կանոնադրութիւն պիտի կոչուի այն կանոնադրութիւնը, որ թեմի միմիայն կենտրոնական, թեմական օրգաններին, հիմնարկութիւններին և ընդհանուր թեմական գործերին վերաբերող օրէնքներ է պարունակում իր մէջ: Մինչդեռ ներկայ կանոնադրութիւնը կարգաւորում է ոչ միայն թեմական (թեմի կենտրոնական), այլ նաև թէ՛ գործակալական և թէ՛ ծխական հաստատութիւններն ու գործերը՝ սւետի ներկայ կանոնադրութիւնը միայն «թեմական» չէ, այլ նաև թէ՛ «գործակալական» և թէ՛ «ծխական». նա կարգ և կանոն է տալիս ամբողջ թեմի բոլոր շրջանների, թէ՛ տեղական և թէ՛ կենտրոնական բոլոր օրգանների համար. հետևապէս նա «թեմի» կանոնադրութիւն է և ոչ սոսկ «թեմական» կանոնադրութիւն:

Երկրորդ՝ առաջիկայ կանոնադրութիւնը աւելի յարմար կը լինէր կոչել «հիմնական կանոնադրութիւն», քան պարզ կերպով «կանոնադրութիւն»: Ատրպատականի թեմի այս անդրանիկ կանոնադրութիւնը պէտքէ գծագրէ թեմի կառավարման և իշխանութեան օրգանների կազմակերպման հիմնական սկզբունքները, առանց յաւակնութիւն ունենալու մանրամասնութիւնների մէջ մտնելու: Թիֆլիսի մասնաժողովը, ըստ երևոյթին, այս հայեցակէտով չէ առաջնորդուել, որով կանոնադրութեան մէջ երկրորդական նշանակութիւն ունեցող յօդուածներ և պա-

նապէս քննելու և խմբագրելու, որպէսզի այդ վերջնական նախագիծը հաստատուի անպայման կերպով և ոչ թէ երկու տարի ժամանակով:

Յունուարի 22-ին Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց տ. Յուսիկ եպիսկոպոսին (Մինոդի անդամ) ուղղուած յատուկ կոնդակով մի առանձին յանձնաժողով կազմել, պատուիրելով՝ վերջնականապէս մշակել և սրբագրել Ատրպատականի կանոնադրութիւնը:

Էջմիածնի յանձնաժողովը, տ. Յուսիկ եպիսկոպոսի նախագահութեամբ, անմիջապէս ձեռնարկեց գործին և փետրուարի 4-ին ներկայացրեց Վեհափառ Կաթողիկոսին իր վերջնական նախագիծը, որ և հաստատուեց փետրուարի 7-ին ոչ թէ ժամանակաւորապէս, այլ անորոշ ժամանակով:

տուէրներ է սահմանել և դրան համապատասխան՝ իր կազմած նախագիծն էլ պարզ «կանոնադրութիւն» անուանելւ Օր. Թիֆլիսի նախագծի 51-րդ և 65-րդ յօդուածները անօրինում էին, որ թեմական և գործակալական խորհուրդների նիստերը գումարում են ամեն ուրբաթ օր»։ Անշուշտ տեղական պայմանների մի պահանջ է, որ նիստերը ուրբաթ օրերը տեղի ունենան. սակայն այդ պայմանները կարող են փոխուել շուտով, կամ նոյնիսկ այժմ էլ, թերևս, այս կամ այն գործակալութեան սահմանում մի այլ օր աւելի յարմարութիւն ունենայ նիստ գումարելու համար. բայցի դրանից շատ հաւանական է, որ կարիք լինի բացի ուրբաթ օրից նաև մի այլ օր նիստեր նշանակել. և վերջապէս, որ գլխաւորն է, շաբաթուայ այս թէ այն օրը նիստ նշանակելու խնդիրը, յամենայն դէպս, զուրկ է որևէ սկզբունքի և էական կարևորութիւնից։ Այդ և նման երկըրորդական կարգեր սահմանուելու հարկ չը կայ հիմնական կանոնադրութեան մէջ, որ աւելի լուրջ և էական խնդիրներ ունի որոշելու։ Հիմնական կանոնադրութիւնը պէտք է իր որոշումը չը տայ այդպիսի մանր և անմիջական գործնական հարցերի համար, այլ պէտք է որոշէ այն օրինաւոր ճանապարհը և այն իրաւաստւ օրգանը, որի ձեռքով հարկ եղած դէպքում և ընթացիկ պահանջին համեմատ սահմանուելու են այդպիսի խնդիրներ կարգաւորող կարգադրութիւններ և հրահանգներ։ Հաստատուած հիմնական կանոնադրութիւնը այդպէս էլ վարում է։ Նա աշխատում է, ըստ կարելւոյն, բացառապէս հիմնական բնաւորութիւն և էական կարևորութիւն ունեցող հարցեր չօչափել և որոշել, մնացածը պարզ կանոնադրութիւնների անօրինութեանը թողնելով, և սահմանում է, որ այդպիսի կանոնադրութիւնների նախագծերը պէտք է կազմէ թեմական խորհուրդը, իսկ սահմանէ և հրատարակէ թեմական ժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատմամբ (տես հիմն. կան. 30 և 48 յօդ.)։ Իսկ վերևում յիշուած (նիստերի գումարման օրուայ) հարցի մասին հիմնական կանոնադրութիւնը միայն այսքան է անօրինում, թէ թեմական, գործակալական և ծխական խորհուրդների հեգթական նիստերը լինելու են թեմական ժողովից սահմանուած օրերը (այն էլ ոչ թէ մի առանձին յօդուածով, այլ մի յարմարաւոր յօդուածի միջանկեալ նախադասութիւնով, տես հիմն. կան. 46, 59 և 67 յօդ. *)։ Այսինքն՝ հիմնական կանոնադրութիւնը պա-

*) Ահա այդ յօդուածները. «46. Բացի հերթական նիստերից, որ լինում են թեմական ժողովից սահմանուած օրերը, կարող են հարկ եղած դէպքերում գումարուել թեմական խորհրդի արտակարգ նիստեր թեմական առաջնորդի,

հանձնում է միայն, որ նիստերի գումարման օրերը (ատենական օրերը) նախապէս սահմանուած, որոշուած և ամենքին յայտնի լինեն և ատենանի (խորհրդի) անդամների ցանկութիւնից կախուած չը լինեն, որով թէ ժողովրդի համար յարմարութիւն է ստեղծուած և թէ զանազան ապօրինութիւնների առաջն է առնուում:—Այս բոլորը ի նկատի ունենալով, վերջնական նախագրծին «հիմնական կանոնադրութիւն» *) անունը տրուեց:

Գալով կանոնադրութեան բովանդակութեանը և Թիֆլիսի նախագծի յօդուածների փոփոխմանը՝ իմ կատարած նոր խմբագրուած այս է եղել: Ես փոփոխել եմ եղած կանոնների բնագիրը, տեղ-տեղ բառեր, ածբողջ նախադասութիւններ աւելացրել, տեղ-տեղ էլ եղած բառերը կամ նախադասութիւնները փոխել կամ դուրս գցել. մի քանի կարևոր խնդիրների վերաբերեալ կանոնները հիմնովին նորից եմ խմբագրել. մի քանի ծանօթութիւններ կանոն եմ դարձրել, իսկ մի քանի կանոններ ծանօթութիւնների վերածել, և վերջապէս թէ եղած և թէ աւելացած կանոնների ամբողջ պաշարը նոր սիստեմով եմ դասաւորել: Նախագիծը ուղղելիս և լրացնելիս առանձին ուշադրութիւն եմ դարձրել իշխանութեան օրգանների իրաւասութիւնը որոշող կանոնների վրայ, որ շատ կարևոր նշանակութիւն ունին և թերի ու անորոշ էին գծագրուած կանոնադրութեան Թիֆլիսի նախագծում: Այնուհետև միշտ աչքի առաջ եմ ունեցել՝ որ զանազան պետութիւնների սահմաններում գտնուող հայերի եկեղեցական-համայնական կարգերը ըստ կարելւոյն միօրինակ պիտի լինին և միմիանց համաձայն: Դրանց բոլորի ամբողջու-

որան փոխարինող նախնորդական տեղապահի, իսկ սրանց բացակայութեան դէպքում—թեմական խորհրդի աւագ անդամի հրաւերով: 59. Բացի հերթական նիստերից, որ լինում են թեմական ժողովից սահմանուած օրերը, կարող են լինել հարկ եղած դէպքերում գործակալական խորհրդի նաև արտակարգ նիստերի գործակալի կամ գործակալական խորհրդի նախանգամի հրաւերով: 67. Բացի հերթական նիստերից, որ լինում են թեմական ժողովից որոշուած օրերը, կարող են լինել ծխական խորհրդի նաև արտակարգ նիստեր աւագ քահանայի հրաւերով:

*) Նոյն իմաստով կարելի էր առաջիկայ կանոնադրութիւնը նաև «Սահմանադրութիւն» անուանել. որովհետև «սահմանադրութիւն» բառը (ինչպէս և դրան համապատասխանող երոպական, լատինական ծագում ունեցող constitutio բառը) նոյն նշանակութիւն ունի («Ազգային Սահմանադրութիւն Հայոց» է կոչուած տաճկահայերի հիմնական կանոնադրութիւնը): Սակայն «սահմանադրութիւն» բառը նաև մի այլ իմաստ ունի, «սահմանադրական», այսինքն պարլամենտական կոնստիտուցիոնել կադմակերպութիւն նշանակելով, մինչդեռ մեր եկեղեցին ոչ թէ «սահմանադրական», այլ դեմոկրատիկ, այսինքն ժողովրդապետական, կամ աւելի պարզ և գործածական բառով՝ ժողովրդական կադմակերպութիւն ունի:

Թիւնը—հայոց եկեղեցին—մէկ մարմին, մէկ կազմակերպութիւն լինելով, մէկ հայոց կանոնական համայն իրաւունքը պէտք է հիմք լինի այդ բոլոր տեղական մասնակի կարգերի: Մեզ պէտք է չը բաժանեն կանոնականի էական տարբերութիւններ: Կանոնականի այս միութեան պատճառով է, որ խմբագրութիւն կազմելիս օգտուել եմ թէ Ռուսաստանի և թէ Տաճկաստանի հայերի տիրող կանոնական կարգերից, թէ գրաւոր և թէ անգիր: Սակայն այն էլ չեմ մոռացել, որ իւրաքանչիւր նոր գրաւոր կանոնադրութիւն եղածների կրկնութիւնը և շարունակութիւնը լինելով հանգերձ՝ պէտք իր հետ նաև որոշ բարեփոխութիւն բերէ՝ անցեալի փորձով հարստացած լինելով:

Այս կերպ աշխատել եմ ուղղել, լրացնել, մշակել, նորից խմբագրել և դասաւորել Ատրպատականի կանոնադրութիւնը:

Քանի որ հիմնական կանոնադրութիւն լինելով, հանգիստնում է միաժամանակ թէ թեմական, թէ գործակալական և թէ ծխական կանոնադրութիւն, ապա բնական կը լինէր հէնց այդ ձևով էլ բաժանել և դասաւորել նրա բովանդակութիւնը: Թեմի վարչական հիմնական բաժանման համեմատ, ուրեմն, կանոնադրութիւնը երեք մաս կ'ունենայ. 1) թեմ, 2) գործակալութիւն և 3) ծխական համայնք: Բացի այս երեք յատուկ մասերից, կանոնադրութիւնը պիտի ունենայ նաև մի առանձին ընդհանուր մաս այն կանոնների համար, որոնք վերաբերում են հաւասար պէս յիշեալ բոլոր վարչական շրջաններին: Այսպիսով ստացուում է հիմնական կանոնադրութեան յետագայ բնական սիստեմը. «ա. ընդհանուր կանոններ (1—22 յօդ.), բ. թեմական իշխանութիւն (23—54 յօդ.), գ. գործակալութիւն (55—65 յօդ.), դ. ծխական համայնք (եկեղեցի—66—73):» Այնուհետև իւրաքանչիւր մասի կանոնները դասաւորուում են օրդանների կարգով: Այսպէս՝ գ. մասում նախ գործակալական ժողովի յօդուածներն են, ապա գործակալական խորհրդի. դ. մասում նախ ծխական խորհրդի յօդուածները, ապա երեսփոխի, իսկ բ. մասը ունի երեք առանձին ստորաբաժանմունքներ՝ «1. թեմական ժողով (23—34 յօդ.), 2. թեմական առաջնորդ. առաջնորդական տեղապահ. առաջնորդական փոխանորդներ (35—42 յօդ.), 3) թեմական խորհուրդ (43—54 յօդ.):»:

Սրբազրել եմ կանոնադրութեան տերմինները, աշխատելով միօրինակ, զտուած և ներդաշնակ մի ամբողջութեան վերածել: Օր. թեմի պատգամաւորների ընդհանուր ժողովը Թիֆլիսի նախադիժը «պատգամաւորական ժողով» էր անուանել, որ անորոշ է: Ծիշտ է, մեղանում (ռուսահայոց թեմերում) այդ ժողովը «պատգամաւորական ժողով» անունով է յայտնի սովո-

րաբար, սակայն «թեմական ժողով» էլ է կոչւում*), և «թեմական ժողով» անունը գերադասելի է, որովհետեւ «պատգամաւորական ժողով», այսինքն պատգամաւորներից գումարուող ժողով ունի ոչ միայն ամբողջ թեմը, այլ նաև օր. գործակալութիւնը (մի գործակալութեան բոլոր ծխական համայնքների ընտրած պատգամաւորներից գումարուող ժողով). թեմական ժողովը—պատգամաւորական ժողով է, սակայն ամեն պատգամաւորական ժողով թեմական ժողով չէ. ինչպէս ասացի, գործակալութեան պատգամաւորական ժողով էլ կայ. կայ և աւելի բարձր աստիճանի պատգամաւորական ժողով—սյդ «համագումար ծայրագոյն ժողովն» է, համայն եկեղեցու ժողովը՝ բոլոր թեմերի պատգամաւորներից գումարուող: Արդէն «ժողով» անունը մեղանում սովորաբար այնպիսի հաստատութիւնների է տրուում, որոնք ժողովրդից ընտրուած ներկայացուցիչներից (պատգամաւորներից) են գումարւում պարբերաբար. իսկ այլ տեսակի հաստատութիւնները սովորաբար «խորհուրդ», «առեան» են կոչւում: Այս պատճառով թէ ամբողջ թեմի կենտրոնական (թեմական) և թէ ստորակարգ վարչական բաժանմունքներից իւրաքանչիւրի տարբեր կարգի հիմնարկութիւնները տարբեր անուններով կոչելու համար շատ յարմար է օգտուել «ժողով» և «խորհուրդ» բառերից, իւրաքանչիւր անգամ պատշաճաւոր տեղական (վարչական շրջանի) մակդիրը կցելով: Այսպիսով կ'ըստանանք՝ «թեմական ժողով» և «թեմական խորհուրդ», «գործակալական ժողով» և «գործակալական խորհուրդ», «ծխական ժողով» և «ծխական խորհուրդ»: Իւրաքանչիւր ժողով իր շրջանի սահմանում բուն և հիմնական կարգադիր և վերահսկիչ իշխանութեան ներկայացուցիչն է, իսկ իւրաքանչիւր խորհուրդ պատշաճաւոր ժողովից է ընտրւում և նոյն ժողովի հաշւառութեան և վերահսկողութեան տակ վարւում է գործադիր իշխանութիւնը, հանդիսանալով համապատասխան շրջանում մշտական գործող հիմնարկութիւն: Թիֆլիսի նախագիծը ծխական խորհրդի անդամներին «ծխական խորհրդականներ» էր կոչւում, որ շատ յարմար է, բայց թեմական և գործակալական խորհուրդների անդամներին պարզապէս «խորհրդի անգամ» էր անուանում: Անշուշտ յարմար կը լինէր միօրինակ ձևով բոլոր խորհուրդների անդամներին «խորհրդական» անունը տալ՝ իւրաքանչիւր անգամ պատշաճաւոր մակդիր աւելացնելով. այս հիմնական կանոնադրութեան մէջ ունենք «թեմական խորհրդական»

*) «Թեմական ժողով» տերմինը պատահում ենք նաև ծխական կանոնադրութեան մէջ (տես յօդուած 12-րդ, կէտ Ժբ.):

ներ», «գործակալական խորհրդականներ» և «ծխական խորհրդականներ»: Իսկ սրանց անձնափոխանորդներն էլ կոչւում են «փոխխորհրդականներ»՝ փոխանալ՝ «փոխանդամ» կոչուելու:

Մի քանի յօդուածներ և ծանօթութիւններ, անորոշ, անյարմար կամ աւելորդ լինելու պատճառով բոլորովին դուրս եմ հանել կանոնադրութիւնից: Օր. Թիֆլիսի նախագծի 7-րդ յօդուածը (ընդհանուր կանոնների շարքից), որ սահմանում էր. «Ատրպատականի հայերի ազգային եկեղեցական գործերը կառավարում են թեմական առաջնորդը և թեմական խորհուրդը»: Այս յօդուածը խիստ անորոշ, պակասաւոր և միանգամայն աւելորդ լինելով՝ լոկ թիւրքմացութիւնների առիթ կարող էր լինել, եթէ մնար հիմնական կանոնադրութեան մէջ, այն էլ ընդհանուր կանոնների շարքում: Յիշուի, ինչ է ուղւում ասել այդ կանոնը, ինչո՞ւ նա միայն թեմական առաջնորդի և թեմական խորհրդի անունն է տալիս՝ առանց միւս հիմնարկութիւնները և եկեղեցական իշանութիւնները յիշատակելու: Միթէ թեմական ժողովը, գործակալական ժողովը ու խորհուրդը և միւս բաղաժիւր օրգանները «Ատպատականի հայերի եկեղեցական-համայնական գործերի կառավարմանը» մասնակից չեն: Արդեօք այդ յօդուածի նպատակն էր հաստատել առաջնորդի և թեմ. խորհուրդի կառավարիչ լինելը, որ սակայն, իր տեղում, այդ հիմնարկութիւնների գործունէութեանը նուիրուած յօդուածներում հանգամանօրէն և որոշակի կերպով սահմանուած լինելով, բոլորովին աւելորդ բան կը լինէր,—թէ ժխտել մնացած հիմնարկութիւնների ունեցած կառավարական իրաւասութիւնը, որ սակայն կը հակասէր նոյն այդ կանոնադրութեան յետագայ ամբողջ բովանդակութեանը: Անշուշտ այսպիսի մի անխորհուրդ յօդուած պատահմամբ կամ թիւրքմացութեամբ միայն կարող էր հանդէս գալ և մնալ: Դուրս գցուեց Թիֆլիսի նախագծի նաև 19-րդ յօդուածը՝ «Ատրպատականի թեմի բոլոր ազգային վանքերը, եկեղեցիները և կրթական ու բարեգործական հիմնարկութիւնը գտնուում են թեմական առաջնորդի իշխանութեան ներքոյ, որ սահմանափակւում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերիշխանութեամբ և պատգամաւորական ժողովի վերահսկողութեամբ»: Այս յօդուածը զետեղուած էր թեմ. առաջնորդին նուիրուած յօդուածների շարքում և աչքի էր ընկնում իր կատարեալ անորոշութեամբ և պակասաւորութեամբ: Շեշտելով թեմական առաջնորդի իշխանութիւնը՝ այս յօդուածը բոլորովին անտես էր անում թեմական խորհրդի ունեցած իրաւասութիւնը նոյն «վանքերի, եկեղեցիների և կրթական ու բարեգործական հիմնարկութիւնների» նկատմամբ, որով անշուշտ թիւրքմացու-

թիւնների և վեճերի պատճառ էր դառնալու առաջնորդի և թեմական խորհրդի մէջ: Բացի դրանից, Ամ. Հայոց Կաթողիկոսի «գերիշխանութեան» և թեմական ժողովի «վերահսկողութեան» յիշատակութիւնը այնքան հարեանցի և անորոշ է, որ ոչինչ չէ պարզում, ոչ էլ որոշում: Այսպիսի ընդհանուր-անորոշ ձևով խմբագրուած կանոններից միշտ պէտք է խուսափել: Վեջապէս՝ այս յօդուածը նաև մի աւելորդ յօդուած էր, որովհետև նրա բովանդակութիւնը կար արդէն կանոնադրութեան միւս յօդուածներում: Կանոնադրութիւն կազմելիս աւելորդ յօդուածներ պէտք չէ յօրինել: Ոչ մի օգուտ չը բերելով՝ միայն թիւրիմացութիւնների առիթ են լինում այդպիսի յօդուածները:

Թիֆլիսի նախագծի համաձայն պէտք է պատգամաւորներին (թեմական ժողովի անդամների) անձնափոխանորդներ (պատգամաւորների թւով), ծխական խորհրդի փոխանդամներ և հաշրեւտեաններ լինէին, որ հաստատուած հիմնական կանոնադրութեամբ վերացուած են: Պատգամաւորները ընտրուելու են իւրաքանչիւր չորս տարին մի անգամ քառամեայ լիազօրութեամբ: Թեմական ժողովի սովորական գումարումը երկու տարին մի անգամ է լինելու: Արդ, բացի պատգամաւորներից նաև նոյն թւով պատգամաւորների անձնափոխանորդներ ընտրել, կապել սրանց այդ պաշտօնով առանց, որևէ հաստատ գործնական հետեւանքի—աննպատակ կը լինէր, մանաւանդ ի նկատի առնելով Ստրպատականի թեմում կարող ոյժերի սակաւութիւնը և այն հանգամանքը, որ թեմական ժողովին անդամակցողը այլ ևս ոչ մի այլ պաշտօն նոյն թեմում վարելու իրաւունք ունենալ չէ կարող (համաձայն հիմնական կանոնադրութեան 11-րդ յօդուածի): Թիֆլիսի նախագիծով անձնափոխանորդը փոխարինելու էր պատգամաւորին սրա «հրաժարման, բացակայութեան, տկարութեան կամ մահուան դէպքում»: Սակայն չորս տարուայ ընթացքում այդ «հրաժարումը, բացակայութիւնը, տկարութիւնը կամ մահը» կարող են պատահել ոչ միայն պատգամաւորին, այլ և նրա անձնափոխանորդին: Թիֆլիսի նախագիծը այս նախատեսած էր, տնօրինելով, որ թէ պատգամաւորի և թէ անձնափոխանորդի բացակայութեան կամ տկարութեան դէպքում պատգամաւորը կարող է իր ձայնը մի ուրիշ պատգամաւորի յանձնել, իսկ թէ պատգամաւորի և թէ անձնափոխանորդի հրաժարման կամ մահուան դէպքում՝ պէտք է պատգամաւորական մասնակի նոր ընտրութիւն կատարուի: Սակայն եթէ «պահեստի պատգամաւորների» գոյութիւնն էլ վերջնականապէս մի ապահովութիւն չէ տալիս, ապա անձնափոխանորդներ ընտրելու կարիքը հազիւ թէ այնքան էլ անփոխարինելի լինի: Հիմնական

կանոնադրութիւնը պատգամաւորների անձնափոխանորդներ չ'ունեն և բաւականում է միայն յետագայ կարգադրութիւնով. «Պատգամաւորը բացակայելիս կարող է օրինական թղթով իր ձայնի իրաւունքը յանձնել մի ուրիշ պատգամաւորի: Ամեն մի պատգամաւոր, բացի իր ձայնից կարող է ունենալ մի աւելորդ ձայն» (հիմն. կան. 24-րդ յօդ.): «Որեւէ գործակալութեան ժողովից ընտրուած պատգամաւորի հրաժարման, տկարութեան կամ մահուան դէպքում՝ տեղի է ունենում պատգամաւորի մասնակի նոր ընտրութիւն՝ յատկապէս այդ գործակալութեան համար: Այս մասնակի ընտրութեան պատճառով թեմական ժողովի նիստերը չեն յետաձգւում» (հիմն. կան. յօդ. 23-րդ. ծանօթ. գ.): Այս երկու միջոցներով (որ, ինչպէս տեսանք, արդէն Թիֆլիսի նախագծին էլ յայտնի էին) բաւականաչափ ապահովոււմ է տեղական համայնքների ներկայացուցչութիւնը՝ առանց անձնափոխանորդների ընտրութեան էլ—Յիշեալ պատճառաբանութեամբ աւելորդ համարուեց նաև ծխական խորհրդականների փոխանդամների ընտրութիւնը, մանաւանդ որ հարկ եղած դէպքում միշտ կարելի պիտի լինի առանց առանձին դժուարութիւնների ծխական ժողով գումարել և նոր ծխական խորհրդականներ ընտրել պակասողների տեղըր—Հաշուետեսներին վերացնելու հիմքն այն է, որ Ատրպատականի թեմում ծխական կազմակերպութեան մէջ ծխական խորհրդի նման մշտական գործադիր և հսկող օրգան լինելուց յետոյ՝ այլ ևս ոչ մի կարիք չը կայ հաշուետեսների յատուկ պաշտօնի մուսահայերիս թեմերում միայն ծխական ժողովներ ունենք (Ատրպատականի թեմում էլ կան), որ ծխական շրջանում պարբերաբար գումարուող գլխաւոր կարգադիր, վերահսկիչ և հաշւառու օրգանն են հանդիսանում, սակայն բնականաբար մեծ կարիք կայ ծխական մի մշտական և գործադիր օրգանի, որպիսի օրգանի դերը մօտաւորապէս և կատարում է հաշուետեսների խորհուրդը (տես ծխական կանոնադրութիւն, յօդ. 82—87): Բայց Ատրպատականի թեմում, ինչպէս ասացի, ծխական խորհուրդ լինելով՝ հէնց այդ խորհրդին կարելի էր յանձնել ամենայն յարմարութեամբ մեր հաշուետեսների իրաւունքները և պարտականութիւնները: Հիմնական կանոնադրութիւնը այդպէս էլ աւելում է (տես հիմն. կան. յօդ. 68, կէտ դ.):

Թիֆլիսի նախագիծը նորից խմբագրելիս՝ ուշադրութիւն դարձրի կանոնադրութեան ընդհանուր կանոնների վրայ, որ թերի և անմշակ էին յօրինուած յիշեալ նախագծում: Շատ կանոններ յատուկ կանոնի ձևով մասնակի կանոնների չափքում էին դրուած, մինչդեռ անհրաժեշտ էր դրանք ընդհանուր կանոնաւորել, 1903.

նի ձևով խմբագրել և կանոնադրութեան ընդհանուր մասում՝ զետեղել: Այսպիսով թէ՛ կանոնադրութեան բովանդակութիւնը կ'ընդլայնուէր, և թէ՛ խմբագրութիւնը աւելի պարզ, կարճ և ամփոփ ձև կ'ընդունէր: Օր. փոխանակ չորս յատուկ կանոններով առանձին-առանձին սահմանելու (ինչպէս այդ անում է Թիֆլիսի նախագիծը), թէ՛ այս ինչ հիմնարկութեան նիստը օրինաւոր լինելու համար անդամների որ թւի ներկայութիւնն անհրաժեշտ է համարոււմ, հիմնական կանոնադրութիւնը բաւականանում է մի ընդհանուր կանոնով, որը սահմանում է. «Բոլոր ժողովների, խորհուրդների և այլ բազմանձնեայ ատեանների նիստերը կանոնաւոր են համարոււմ, երբ ներկայ է լինում անդամների մեծամասնութիւնը, ընդհանուր թւի կէսից աւելին: Բացի յատկապէս յիշուած պէպքերից» (14-րդ յօդ.): Նոյն կերպ հիմնական կանոնադրութեան 15-րդ կանոնը մի յօդուածով տնօրինում է այն, ինչ բանի Թիֆլիսի նախագիծը չորս յօդուած էր նուիրել: Ահա այդ յօդուածը. «Բացի յատկապէս յիշուած դէպքերից՝ բոլոր վճիռները և ընտրութիւնները կատարոււմ են զադանի քուէարկութեամբ և ձայների հասարակ մեծամասնութեամբ: Ձայների հաւասար բաժանման դէպքում գերակշռում է այն կողմը, որին իր ձայնը տալիս է նախագահողը» (հիմն. կան. յօդ. 15-րդ): Թիֆլիսի նախագիծը երկու առանձին յօդուածով սահմանում էր, որ միաժամանակ չէ կարելի անդամակցել վերաստուգող յանձնաժողովին և թեմական խորհրդին, անշուշտ այն պատճառով, որ այդ հիմնարկութիւններից մէկը քննում և վերահսկում է միւսի գործունէութիւնը: Սակայն այդ մի ընդհանուր կանոնի բնաւորութիւն ունենալով՝ հիմնական կանոնադրութիւնը յիշեալ յատուկ յօդուածները մէկ ընդհանուր կանոնի *) է վերածում. «Ոչ ոք չէ կարող միաժամանակ երկու աջակիսի պաշտօն ստանձնած լինել, որոնցից մէկը ենթակայ է միւսի վերահսկողութեանը և հաշւառութեանը: Բացի յատկապէս յիշուած դէպքից» (հիմն. կան. յօդ. 11-րդ): Թիֆլիսի նախագիծը տնօրինում էր մի յատուկ յօդուածով, թէ թեմ. առաջնորդը չէ կարող նախագահել պատգամաւորական ժողովի նիստերին՝ առաջնորդի անձնաւորութեան վերաբերեալ հարցեր քննուելիս», իսկ հիմնական կանոնադրութիւնը դրա փոխարէն

*) Բացի այդ ընդհանուր կանոնից՝ հիմն. կանոնադրութիւնը ունի նաև մի յատուկ լրացուցիչ յօդուած. «Եթէ թեմական խորհրդական կամ փոխ-խորհրդական է ընտրոււմ թեմական ժողովի անդամը, սա հրաժարուած է համարոււմ պատգամաւորի պաշտօնից՝ թեմական ժողովի նոյն նստաշրջանից յետոյ» (հիմն. կան. յօդ. 45-րդ):

մի այսպիսի ընդհանուր կանոն է սահմանում. «Այն պաշտօնեաները, որոնք որևէ անձնական շահ ունեն ատենում խորհրդածութեան նիւթ դարձած և վճռուելիք խնդրում կամ եթէ այդ խնդիրը իրանց է վերաբերում, նոյն այդ խնդրի մասին խորհրդածութեան և վճռահատութեան չեն կարող մասնակցել ձայնի իրաւութիւնով կամ նախագահել» (հիմն. կան. յօդ. 12-րդ): Յօդուածները ամփոփելու մի օրինակ է նաև հիմնական կանոնադրութեան 42-րդ յօդուածը (առաջնորդական փոխանորդների մասին), որ պարունակում է Թիֆլիսի նախագծի վեց յօդուածների բովանդակութիւնը և մի քանի լրացուցիչ կէտեր: Այս բոլորի շնորհիւ հիմնական կանոնադրութիւնը, չը նայելով բազմաթիւ և կարևոր լրացումների, քանակի կողմից շատ քիչ չափով ստուարացաւ և բաժանուեց ընդամենը 73 ամփոփ յօդուածների:

Հիմնական կանոնադրութեան վերնագրի մասին գրելիս մատնանիշ արի հիմնական և պարզ կանոնադրութեան տարբերութեան վրայ, յայտնելով որ Ատրպատականի ներկայ կանոնադրութիւնը պէտք է հիմնական կանոնադրութիւն լինէր: Հետևաբար պէտք է ընդունենք և նախատեսենք պարզ կանոնադրութիւնների անհրաժեշտ հրատարակուելը ապագայում: Սակայն Թիֆլիսի նախագծում այս խնդիրը թերի կերպով որոշուած և մշակուած լինելով՝ հարկաւոր էր կանոնադրութեան վերջնական խմբադրութեան ժամանակ առանձին ուշադրութիւն դարձնել նրա վրայ՝ ի նկատի ունենալով խնդրի էական կարևորութիւնը:

(Կը շարունակուի)

ՍԻՐԱԿԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ